

Athanase Vantchev De Thracy – poems
Translated into Armenian by Gagik Davtyan
76.

Non, Norton, rien n'existe
Qui ne soit divin –
Les gouttes de pluie
Sur le feu des mots,
Le lait qui chante en sortant du pis,
La clairière de crocus,
La floraison soutenue des cerisiers,
La main du miracle sur nos tempes !

Ô douleur et légèreté
De la vie quotidienne !

Anxieuses subtilités,
Inquiétudes empressées
Et long tremblement du sang
Dans le silence des maisons vides !

Glose :
Norton Hodges (né en 1948) : un des plus grands poètes contemporains anglais.

76.

Ոչ, Նորտոն, ոչ, չկա և ոչ մի գոյ,
Որ Աստվածային ծագում չունենա:
Կաթիլն անձրևի –
Բառերի բոցին իջած,
Կաթը՝ կովի կրծից շփշփոցով հոսող,
Դաշտը քրքումնաբույր,

Փարթամորեն ծաղկած բալենին այս,
Հրաշքի զգացումը մեր քունքերի վրա:

Օ, հանապազօրյա
ցավ ու թեթևություն:

Անպարզորոշ վախեր,
Փութկոտ արծազանքներ,
Եվ անընդհատ տրոփ արյան՝
Լռության մեջ դատարկ սենյակների:

77.

L'eau pure du matin
Nettoie la tristesse du visage !

Le poids des morts sur mon cœur
Est doux et léger
Comme la mousse verte sur les dalles !

Le soleil édite les contes de l'air
Volume après volume !

Aujourd'hui,
Je veux être un
Avec le chant inlassable des herbes !

Ces herbes qui poussent
Dans les mots bien policés !

77.

Առավոտի մաքուր ջուրը
Լվանում է տխրությունը դեմքիս:

Մեռյալների բեռը սրտի վրա
Թեթևանում, դառնում է անկշռելի,
Շիրմասալիկների կանաչ մամուռն ինչպես:

Արեգակը օդե հեքիաթներ է հյուսում
Հատոր – հատոր:

Ես այնպես եմ ուզում
Մենակ մնալ այսօր
Երգի հետ խոտերի:

Անդադար երգի հետ այն խոտերի,
Որոնք մշակովի բառերում են աճում:

78.

Je regarde la rue de nos amours
Du haut du balcon de notre vieille maison.

À quoi bon aujourd’hui
Toutes ces fleurs,
Toute cette belle lumière ?

Moi, si éloigné à présent du bonheur !

Moi dont le sang est plein
De cet amour ancien de mai
Et de cette antique ville d'eau, de mouettes
Et de ciel rose !
Ah, İstanbul çok uzak !

Glose :

Ah, İstanbul çok uzak – vers d'un poème turc qui signifie Ah, İstanbul est si loin.

78.

Ախ, նայում եմ ես մեր սիրո փողոցին
Պատշգամբից մեր հին տան:

Եվ ո՞ւմ եմ պետք
Այս ծաղիկները հիմա,
Այս աշխարհի գեղեցկությունն անսահման:

Երջանկությունն այնքան հեռու է ինձնից:

Իմ արյունը լիքն է սիրով
Այն հեռավոր մայիսի,
Այն ափամերձ հին քաղաքի,
Որ վարդագույն երկինք ունի ճայերով:
Ախ, «Իտանբուլ չոխ ուզակ»:

Ծանոթագրություն. «Իտանբուլ չիխ ուզակ»: - Ստամբուլը շատ հեռու է:

79.

Les haies arbustives,
La tribu joyeuse des merles,
La végétale patience des petites fleurs
Et cet après-midi à la vigueur rustique !

Les arbres gonflent de joie
Leurs feuilles à la mémoire affamée !

Et nous, devant toute cette
Félicité de la beauté
Avec nos yeux de lumière
Et nos visages étiolés !

Ô âme, au commencement
Et à la fin de la vérité,
Il y a toujours la vérité !

79.

Թփուտներից հյուսված ցանկապատեր,
Կեռնեխների երամ,
Մանրիկ ծաղիկների համբերություն:
Եվ ետճաշա ժամն այս
Գյուղական երանգով:

Ծառերը ծածկվել են
Հիշողության ծարավ տերևներով:

Եվ մենք՝
Երանելի այս հրաշքի դիմաց,
Լույսով լի աչքերով,
Ժպիտներով շողուն:

Օ, հոգի, դու սկզբուն և վերջուն ես
Իրականության:
Իրականությունը ապրում է հավերժ:

80.

Soir pacifié par les dits
Sublimes des hautes courtisanes,
Soir clair par la prière !

Moi, je te connais
Bibliothèque aux poumons transparents,
À la respiration de feuille d'or !

Immortelles archives
Des érables
Qui rendent inépuisables
Les trésors du ciel printanier !

80.

Երեկո, խաղաղված սրտառուչ խոսքերով

Բարձր կուրսի զանուիհիների,
Երեկո, աղոթքով լուսավորված :

Ինձ լավ ծանոթ է
Գրադարանը թափանցիկ թոքերով,
Եվ հոգոցներով կանաչ տերևների.

Եվ անմահ արխիվները
Թխկիների,
Որ անտակություն են հաղորդում
Գարնանային երկնքին :